Փաշինյանն ու Ռուբինյանը չեն այցելում Ադրբեջանին աջակցած Բելառուս, բայց հաճախակի այցելում են Թուրքիա, մի երկիր, որը ոչ թե աջակցել է Ադրբեջանին, այլ Հայաստանի եւ Արցախի դեմ կազմակերպված պատերազմի հեղինակներից է, թուրք գեներալներն ու ռազմական մասնագետներն են ղեկավարել ռազմական գործողությունները:

Կարդացեք՝ էջ 5

405 թվականին հայերը կանգնած էին ոչ թե աշխարհաքաղաքական ընտրության, այլ՝ մշակութային ինքնության պահպանման խնդրի առաջ: Մեսրոպ Մաշտոցի լուծումը եղավ լեզվի, կրթության եւ հավատքի ամրապնդումը: Իսկ «Ողբամ քեզ, Հայոց աշխարհ»-ը ծնվեց այն ժամանակ, երբ այդ արժեքները թուլացան, եւ պետականությունը քայքայվեց:

Կարդացեք՝ էջ 6

Կրթության նախարարությունը, մեր հարցին ի պատասխան, մի հսկայական գրություն է ուղարկել, սակայն չի նշել ամենակարեւորը, թե քանի երեխա է դուրս մնացել պարտադիր կրթության համակարգից: Նույն հարցը գրավոր ուղարկել էինք ՏԿԵՆ, որտեղից մեզ պատասխանել են, որ մոտ 300 երեխա է դուրս մնացել հանրակրթությունից:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 41 (4176), 18 մարտ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

2021-ից ԱԺ պատգամավորներին այլեւս պատգամավորական ՀՀ 11 սերիայով համարանիշներ չեն տրամադրում, որ նրանք փակցնեն իրենց մեքենաներին: Մենք քանիցս անդրադարձել ենք, որ ոմանք ծանր էին տանում աշխատակազմի այդ որոշումը, քանի որ արտոնյալ եւ տարբերվող համարանիշներով մեքենաներին ճՈ տեսուչներն ավելի ներողամիտ են վերաբերվում՝ նրանց ճանաչում են, չեն կանգնեցնում: Այժմ միայն խորհրդարանի ղեկավար կազմին՝ նախագահին, փոխնախագահներին սպասարկող մեքենաներն ունեն հատուկ համարանիշներ: Օրինակ, Փաշինյանի աներձագ Հրաչ Հակոբյանը տեւական ժամանակ աշխատակազմին չէր հանձնում պատգամավորի իր համարանիշները: Պարզվում է՝ աներձագը հատուկ սեր ունի պետհամարանիշների հանդեպ: Իր վերջին թանկարժեք՝ 2021-ի արտադրության, 18 մլն դրամ արժողությամբ «Վոլվո» մեքենայի վրա փակցրել է 101 ՀՀ 04 համարանիշները: Մի կողմից, համարանիշների սերիան՝ ՀՀ, իր անվան եւ ազգանվան հապավումն է խորհրդանշում, մյուս կողմից՝ ԱԺ ղեկավարների համար նախատեսված պետհամարանիշներին է նման:

Հայոց ցեղասպանության ինստիտուտի տնօրենի պաշտոնից սկանդալով հեռացած Էդիտա Գզոյանի ճակատագիրն արդեն որոշվել է. մնալու է թանգարան-ինստիտուտում՝ որպես շարքային գիտաշխատող, թեպետ լուրեր կային, որ հնարավոր է զբաղեցնի տնօրենի տեղակալի պաշտոնը: Իշխանությունը, ըստ էության, որոշել է ամբողջ խստությամբ պատժել Գզոյանին ու նրան զրկել ղեկավար պաշտոն զբաղեցնելուց: Աշխատակազմից տեղեկացանք, որ Գզոյանը հայտնի դեպքերից հետո արձակուրդ է գնացել, տնօրեն լինելու տարիներին աշխատել է գրեթե առանց հանգստի եւ երկարատեւ արձակուրդ ունի կուտակած, ասում են՝ մայիսին նոր կվերադառնա աշխատանքի, սակայն դեպրեսիվ վիճակում է, կարծում է, որ իշխանությունն իր նկատմամբ այդ քայլով տվել է ինստիտուտի քանդման մեկնարկը:

Արարատի մարզի Սուրենավան բնակավայրի վարչական ղեկավար Անի Վարդազարյանի ֆեյսբուքյան էջից տեղեկացանք, որ նա ծնվել է 1997 թվականի ապրիլին, ավարտել է Հայաստանի ֆիզկուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտը: Ֆիզկուլտուրայի մասնագետ կինը 2022թ. հունվարի 3-ից, երբ դեռ 25 տարեկանը չէր լրացել, Սուրենավանի վարչական ղեկավար է նշանակվել: Ո՞րն է այդ նշանակման «գաղտնիքը»: Անի Վարդազարյանի ֆեյսբուքյան էջում Նիկոլ Փաշինյանի տեսանյութերն են, լուսանկարները՝ Նիկոլ Փաշինյանի, Սուրեն Պապիկյանի հետ:

Ձախողված փիառ

Նրանք, ովքեր ոգեւորված հետեւում են Նիկոլ Փաշինյանի քայլերին եւ հիանում նրա մտքի ճկունությամբ ու նախընտրական քարոզչություն իրականացնելու հմտություններով, մոռանում են, որ այդ քարոզչությունն իրականացնելիս նա քողարկվում է ՀՀ վարչապետի լծակների տակ եւ օգտագործում պետական ռեսուրսները: Այսինքն, մեր բոլորի հանրային միջոցները վատնվում են ՔՊ-ի քարոզարշավի վրա: Որովհետեւ «ուրախ ավտոբուսի» շրջագայությունները բացառապես ՔՊ-ի քարոզչությանն ու առաջիկա ընտրություններին են ուղղված: Անգամ եթե այդ ավտոբուսի բենզինն իրենց գրպանից լցնեն կամ «պեռաշկիների» փողն իրենց աշխատավարձից ծախսեն, միեւնույն է՝ պետական ահռելի ռեսուրսներ են ծախսվում: Ինչպես ռեսուրսներ են ծախսվում նաեւ Եկեղեցու դեմ արշավի շրջանակներում, երբ պետական ապարատն ու վարչապետական թիկնազորը, ուղեկցող մեքենաներով ու համայնքային իշխանությունների ներգրավմամբ, շրջում էին հանրապետության եկեղեցիներով եւ ուխտադրժություն քարոզում հոգեւորականների շրջանում: Ընդ որում, վարչապետական հզոր փիառի եւ խելացի քարոզարշավի վրա հիացողները չեն էլ նկատում, որ այդ արշավն արդեն հիմնովին ձախողվել է: Տիրադավ եպիսկոպոսներից մեկին կարգալույծ արեցին, մյուսը վերադարձավ Մայր Աթոռի գիրկը, երրորդը կամովին կոչվեց հանգստի: Մնաց 7 տիրադավ, որոնք, ըստ լուրերի, դեպրեսիայի մեջ են, չգիտեն իրենց անելիքները՝ ոչ կարող են հետ դառնալ, ոչ շարունակել այդ անիմաստ պայքարը՝ ընդդեմ կաթողիկոսի: Եվ այդ փակուղային վիճակի ճարտարապետը Նիկոլ Փաշինյանն է, որն անհասկանալի պատերազմ հայտարարեց Եկեղեցուն ու ավանտյուրայի մեջ ներքաշեց բարձրաստիճան հոգեւորականներին: Եվ անգամ Մայր Աթոռին հավատարիմ սրբազանների կալանավորումն ու դատապարտումն այդ պայքարի հաջողությանը չնպաստեցին:

«Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանն օրերս հայտարարեց, որ իր ղեկավարած ուժը նույնպես կմասնակցի հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններին. «Կմասնակցենք ընտրություններին, աներկբա է»: Նաեւ հավելել է. «Չարժե ծանրաբեռնել դաշտը առանձին մասնակցություններով, առավել եւս, որ չեմ տառապում վարչապետի թեկնածու լինելու մարմաջով»: Ստացվում է, որ կմասնակցեն ընտրություններին, բայց ոչ՝ անհատապես, այլ միանալով ուրիշ ուժի: Մեր տեղեկություններով՝ Հայաստանի առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը նույնպես կմիանա Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը, թեեւ հնարավոր է՝ անձամբ տեղ չզբաղեցնի նախընտրական ցուցակում: Ի դեպ, տեղեկություններ կան, որ այլ թափառող ուժերի եւս այս ընտրությունների թիվ մեկ ֆավորիտը հավաքում է իր թեւի տակ, սակայն պարտադիր չէ, որ նրանք՝ բոլորը, ներկայացուցիչներ ունենան ցուցակում:

ՊԱՏՄԱԲԱՆ, ՖԻՆԱՆՍԻՍՏ ԵՎ ՈՍՏԻԿԱՆ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մասնագիտությամբ պատմության դասատու է, նրա 3 տեղակալները՝ ֆինանսիստներ եւ ոստիկան: Պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Բատիկյանը նույնպես կրթությամբ ու աշխատանքային փորձով կապ չունի պաշտպանական ոլորտի հետ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, 2013-2014 թթ. պաշտոնավարել է որպես «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի իրավաբանական բաժնի ղեկավար, 2013-2017 թթ.՝ «Արթէլա» իրավաբանական գրասենյակի տնօրեն, 2014-2016 թթ.՝ «Տնտեսահրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ-ի գլխավոր տնօրեն, 2017-2019 թթ.՝ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման (ենթակառուցվածքների) նախարարության իրավաբանական բաժնի պետ: 2021թ. դեկտեմբերի 8-ից որպես ՊՆ գլխավոր քարտուղար պաշտոնավարող, անկուսակցական Համլետ Բատիկյանը, սակայն, ընդգրկվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում: Նա ՔՊ-ի ընտրացուցակի ձեւավորման առաջին փուլի քվեարկության արդյունքներով զբաղեցրել է 172-րդ տեղը՝ ստանալով ընդամենը 79 քվե:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԴԻԼԵՏԱՆՏԻԶՄ, ԱԲՍՈՒՐԴ ՈՒ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է ՏԻՐՈՒՄ

Ամեն օր մեր աչքի առաջ տարբեր հանցագործություններ՝ դաժան սպանություններ, հրազենային հարձակումներ, ծեծ ու խոշտանգումներ են տեղի ունենում, ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը Հ1-ում հայտարարում է, որ հանցավորությունը երկրում նվազել է 3.2 տոկոսով, եւ մեդիային է մեղադրում, թե դա «միջազգայնորեն հայտնի մեդիա-տեխնոլոգիա է, երբ հանրության շրջանում անհանգստության եւ քաոսի մթնոլորտ ստեղծելու համար տեղեկատվական դաշտում սկսում են ավելի ակտիվորեն գեներացվել նման խոսակցություններ»:

«Քլիքաբեր մեդիա-լուրերը, բնականաբար, տարածվում են: Այս պահին մեդիայում էլ կան տարբեր ալգորիթմներ, որոնք թույլ են տալիս ավելի մեծ տարածում ունենալ այնպիսի վերնագրերով հրապարակումներին, որոնք կարող են հուզական որոշակի էմոցիաներ առաջացնել մեր քաղաքացիների մոտ»,- ասել է նա եւ ընդգծել, որ սա հատուկ է արվում՝ նախընտրական փուլում իշխանություններին վնասելու համար:

Զրուցել ենք Երեւանի նախկին դատախազ, փաստաբան **Ռաֆֆի Ասլանյանի** հետ:

- ՆԳ նախարարը մեղադրում է մեդիային, թե իբր լրագրողներն են ուռճացնում հանցավորության ցուցանիշները, որ թույլ չտան ՔՊ-ի վերընտրությունը: Սակայն անզեն աչքով երեւում է, որ Հայաստանը փոքրիկ Սիցիլիա է դարձել, որտեղ ամեն օր լսում ենք տարաբնույթ սպանությունների, գողության դեպքերի, ինքնասպանությունների ու ավտոպատահարների մասին: Ի վերջո, ինչո՞ւ է Արփինե Սարգսյանը փորձում իրականությունը խեղաթյուրել:

- Ակնադիտական եղանակով էլ միայն, առանց իրենց մանիպուլյատիվ վիճակագրական տվյալների, ակնհայտ է, որ Հայաստանում իսկապես կա հանցավորության զգալի աճ: Թե հիմա նախարարն ինչ կասի եւ ինչպիսի մանիպուլյացիաների կդիմի, էական չէ: Ես չեմ զարմանում սրանց ոչ մի հայտարարությունից: Գործ ունենք մի իշխանության ներկայացուցչի հետ, որը պնդում է՝ Արցախը հանձնելով անկախություն ստացանք: Նման ցնդաբանություններից հետո կարելի է լսել ցանկացած ցնդաբանություն՝ հասկանալով, որ այս իշխանությունների պարագայում լրիվ բնական երեւույթ է ցնդաբանելը: Այս մարդիկ բոլոր հնարավոր եւ անհնար սահմանները հատել են, ստերի, հորինվածքների ռեկորդակիր են, նախարարը կարող է ինչ ասես խոսել, բայց իրականությունն այլ է: Այս մարդիկ սուտ ասելու մեջ մասնագիտացել են: Ստով, շոուներով կարծում են, թե կարող են հասարակությանը խաբել, մանիպուլացնել, ես չգիտեմ, թե այդ մեթոդը դեռ որքան կաշխատի, բայց քանի դեռ այն կենսունակ է, իրենք դրանով են առաջնորդվում: Յուրաքանչյուր տրամաբանող քաղաքացի ամեն ինչ տեսնում է, տեսնում է, թե օրվա, շաբաթվա, ամսվա կտրվածքով որքան հանցագործություններ են տեղի ունեցել, բոլորս ենք տեսնում, թե իրավապահ մարմիններն ինչ որակի աշխատանք են կատարում: Իրավապահների աշխատանքը, հատկապես՝ ոստիկանների, խայտառակություն է: Ոստիկանները հասել են նրան, որ արդեն տուժողներին են ծեծի ենթարկում, որպեսզի բացահայտեն հանցագործությունը: Այսինքն՝ այն կետին ենք հասել, որ ոստիկանը հանցագործին ու տուժողին իրարից չի տարբերում: Այ, այսպիսի անհուսալի վիճակում է այդ համակարգը: Այդ մասին շատ է խոսվում, քանի որ այն առավել, քան երբեւէ, ակնառու է, ուստի նախարարի խոսքերը ոչ մի արժեք չունեն, ոչ մեկին հավատ չեն ներշնչում: Ինչ վերաբերում է իրենց հրապարակած վիճակագրական ցուցանիշներին, ապա դրանք բնավ ոչ մի ժամանակահատվածում էլ իրականությունը չեն արտացոլել, քանի որ այդտեղ մանիպուլյացիաների դիմելու մի շարք կետեր կան: Կան հնարքներ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում իրական շարժընթացը ցույց տալուց խուսափելը: Ուղղակի հոգատարություն է պետք այս ոլորտում, ինչպես որ ցանկացած ոլորտում, որպեսզի պատկերը հուսադրող դառնա:

- Ի՞նչն է պատճառը, որ հանցավորությունն այս տեմպերով աճում է, եւ երեկոյան ժամերին քաղաքում միայնակ զբոսնելն արդեն դառնում է վտանգավոր:

- Պատճառը համատարած դիլետանտիզմն է եւ ոչ պատշաճ կադրերի նշանակումը: Շփվում ենք իրավապահների հետ, տեսնում ենք նրանց աշխատանքը: Չի կարելի ասել, թե նախկինում բոլորը եղել են տաղանդավոր, չէ, բայց անցյալում կար եւ լավը, եւ վատը, բայց հիմա համատարած խայտառակություն, դիլետանտիզմ, աբսուրդ ու անգրագիտություն է տիրում: Այս ամենի հետեւանքները շատ ծանր են ու ծանր են լինելու: Ես չգիտեմ, թե այս պատկերն ինչպես պետք է հաղթահարվի: Ճիշտ, առողջ սերնդափոխություն տեղի չի ունենում, օպերլիազորներն անգամ տարրական գրագիտություն չունեն, ես դեպքեր գիտեմ, որ օպերլիազորը նույնիսկ տեղեկանք կազմել չգիտի: Նախկինում էլ դժգոհում էինք նրանց աշխատանքից, բայց այն տարիների համեմատությամբ սրանց գրագիտությունն ուղղակի անհամեմատելի է, սրանք բացարձակ անգրագետներ են: Ես բազմիցս փորձել եմ հասկանալ, թե այս մարդիկ, վերջիվերջո, ինչի են տիրապետում, ինչի են ընդունակ, պարզվել է, որ անգամ մի ձերբակալման արձանագրություն, օրենքի պահանջներին համապատասխան, չեն կարողանում կազմել: Այս իրավիճակում կա նաեւ մեկ այլ օբյեկտիվ պատճառ՝ իշխանության բացթողումները, օրինակ՝ պարեկային ծառայության ներդրումը: Երբ այդ համակարգը ներդրեցին, պարեկներին երկու գործառույթ տվեցին՝ հանցագործությունների դեմ պայքար, ճանապարհատրանսպորտային պատահարներ: Արդյունքում՝ օպերատիվ բլոկը կրճատվեց, իբրեւ թե պարեկային ծառայությունը կարողանում է զբաղվել երկու գործով էլ, սակայն մենք տեսնում ենք, որ պարեկները եւս գրագետ չեն, դրան էլ գումարած՝ կա քանակի խնդիր: Այսինքն՝ պարեկային ծառայությունն այժմ չի կարողանում նույնիսկ ճանապարհատրանսպորտային իրավիճակը վերահսկել, էլ ուր մնաց՝ հանցագործություններով զբաղվի: Հույսները դրել են պարեկների վրա, օպերատիվ բլոկը ոչնչացրել են, ինչն էլ իր հերթին հանգեցրել է այս վիճակին: Սա էլ իշխանության դիլետանտիզմի արդյունքն է:

- Երբ իքս վայրում սպանություն է տեղի ունենում, դրան հաջորդող շաբաթներին, անգամ ամիսներին, տվյալ վայրում անդադար ոստիկաններ են հսկում-շրջում, ինչը երբեմն զավեշտալի է, քանի որ կանխարգելիչ ոչինչ չի արվում, սակայն դեպքից հետո չգիտես թե ում կամ ինչն են հսկում: Սա ի՞նչ պայքարի մեթոդ է:

- Այստեղ գուցե կա դեպքի պահպանության խնդիր, ամեն դեպքում, կադրերի սղության պատճառով էլ այսքան սպանություններ են լինում, քանի որ նրանց մեծ գործառույթ է վստահված: Եթե պարեկային ծառայության վրա է այդ բեռը, դա նշանակում է, որ պարեկների թիվը կրկնակի պետք է ավելանա: Էլ չենք խոսում պրոֆեսիոնալիզմի մասին, բարձրագույն կրթության անհրաժեշտության մասին: Այսօր, նախկինի համեմատ, մենք դրսում սովորական բաժնի ոստիկաններ չենք տեսնում, քանի որ թաղային ոստիկաններ եւ այլն համատարած կրճատվել են, լրիվ թողել են պարեկային ծառայության վրա, որն ուղղակի ի վիճակի չէ իր վրա դրված ֆունկցիան կատարել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՍՈՒՏ Է ԽՈՍԵԼ՝ ՆԱ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼՈՒ Է

Նոր Նորքի նախկին թաղապետ Տիգրան Տեր-Մարգարյանի եւ ակտիվիստ Արթուր Չախոյանի ու Մեսրոպ Մանուկյանի վերաբերյալ քրեական գործը նախորդ տարվա օգոստոսից դատարանում է՝ դատավոր Սաթենիկ Անդրեասյանի վարույթում:

Հիշեցնենք, որ 2025-ի ապրիլի 29-ին ակտիվիստ Արթուր Չախոյանն ու Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը բողոքի ակցիա էին իրականացրել թաղապետարանի մոտ՝ յոգուրտ լցնելով թաղապետի նկարի վրա, որը դրանից առաջ մասնավոր հեռախոսազրույցում հայհոյել էր նրանց: Հաջորդ օրը՝ ապրիլի 30-ին, Արթուր Չախոյանը գնացել էր Նոր Նորք վարչական շրջան՝ հանրային քննարկման մասնակցելու, որի ժամանակ թաղապետի կողմնակիցները՝ Տեր-Մարգարյանի ակտիվ մասնակցությամբ, ծեծել էին նրան՝ հենց տեսախցիկների առաջ: Տիգրան Տեր-Մարգարյանը, որը «Հանրապետություն» կուսակցության անդամ է, հետո նշել էր, որ լավ է արել, որ հայհոյել է եւ ծեծել, եւ նրան պաշտպանել էին իր կուսակիցները: Բայց հանրային ճնշման ներքո իրավապահները ստիպված էին քրեական գործ հարուցել: Ընդ որում, 2 գործ հարուցվեց. մեկը՝ ակտիվիստների նկատմամբ, մյուսը՝ ծեծողների: Երեւանի քաղաքապետարանից, անդրադառնալով տեղի ունեցածին, նշել էին, որ բռնությունը՝ ցանկացած դրսեւորմամբ, անընդունելի է, ընդ որում՝ բռնությունը միայն ֆիզիկականը չէ: Միջադեպից հետո Արթուր Չախոյանի աչքի տակ կապտուկ կար, եւ դեմքին՝ արյունազեղման նշաններ:

Նշենք, որ բոլոր վեց մեղադրյալների, այդ թվում՝ Տիգրան Տեր-Մարգարյանի, Արթուր Չախոյանի եւ Մեսրոպ Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել բացակայելու արգելքը: Մենք հետաքրքրվեցինք, թե ինչ փուլում է գործը: **Մեսրոպ Մանուկյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց, որ գործով նիստեր են տեղի ունենում, հասել են դատարանում վկաների հարցաքննության փուլին, առաջիկայում հարցաքննվելու է «Հանրապետություն» կուսակցությունից Անի Խաչատրյանը. «Ինքը ցուցմունք է տվել, հարցաքննվելու է այդ ցուցմունքի շրջանակում: Իմ գնահատմամբ՝ ինքը սուտ, շառլատան բաներ է արել, սուտ բաներ է խոսել, այդ փուչիկը դատարանում կտրաքի, բայց «Հանրապետություն» կուսակցության ներկայացուցչի համար դա նորմալ երեւույթ է: Հարցաքննվելու են նաեւ թաղապետարանի աշխատողները, որոնք Արթուրի հետ են եղել»:

- Ինչպե՞ս են նիստերն անցնում՝ նորմա՞լ մթնոլորտում:

- Նորմալը ո՞րն է, այդ մարդիկ գնացել, գրել են իմ վրա, որ ես յոգուրտ չեմ լցրել, ուրիշ բան եմ լցրել իրենց դեմքին, բայց քաղաքակիրթ աշխարհում նման ակցիաներ իրականացվում են, չգիտեմ՝ այդ մարդիկ իրենց ինչի են ստորացված զգացել, զգացե՞լ են, թե՞ չէ, այդ պահը չի եղել, որ հասկանամ՝ իմ գործով տուժածն իրեն ինչքան է ստորացված զգացել:

- Եթե յոգուրտ չէ, բա իրենք ի՞նչ են ասում՝ ի՞նչ եք լցրել:

- Այդ հարցն իրենց տվեք, եթե ինձ հարցնում եք, ես ասում եմ՝ յոգուրտ եմ լցրել, իրենք չգիտեմ ինչ են պատկերացնում, դա իրենց երեւակայությունն է, երեւի ինչ-որ մանկական տրավմաներ ունեն, դրա հետ է ասոցացվում: Ես ամենայն պատասխանատվությամբ ասում եմ՝ յոգուրտ եմ լցրել:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Մի կերպ ոլսաց

Գրել էինք, որ անցած շաբաթ ՔՊ վարչությունը «մեղադրյալի աթոռին է նստեցրել» Վայքի տարածքային կառույցի անդամ Հայկ Ավագյանին, որին կասկածել են ներկուսակցական ընտրությունների ժամանակ զեղծարարությունների մեջ: Գտել են, որ նա չէր կարող ազնիվ պայքարում տեղ զբաղեցնել պատվավոր 50-րդ հորիզոնականում: Ճիշտ է՝ նա ստիպված էր իր տեղը զիջել քվոտայով խորհրդարան անցնող կանանց, որ կատարվի օրենքի պահանջը: Հայկ Ավագյանին հրավիրել են ՔՊ վարչություն եւ անորոշ կասկածների հիման վրա մեղադրանքներ առաջադրել, թե՝ դու չէիր կարող այդքան ձայն հավաքել, հաստատ՝ ուղղորդել ես պատվիրակներին: Մոտավորապես այս տեքստով, որ դու՝ շարքային կուսակցականդ, ինչպե՞ս կարող էիր ընտրյալների հետ ոտք գցել: Սակայն քանի որ որեւէ կոնկրետ ապացույց չկա Ավագյանի դեմ, թեպետ ողջ կուսակցությանը մոբիլիզացրել են, որ ապացույցներ հայտնաբերեն, ուստի որոշել են նրան թողնել ցուցակում՝ չհեռացնել, ինչպես արեցին Դավիթ Դանիելյանի եւ Կարեն Գրիգորյանի դեպքում, որոնց դեմ իրեղեն ապացույցներ են եղել:

ԵՄ-Ն ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԷԼ ԷՐ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՈՒԶՈՒՄ ՓՐԿԵԼ, ԲԱՅՑ ՉՍՏԱՑՎԵՑ

Ռունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ, իշխանության խուճապն ու անհանգստությունը՝ իշխանությունը կորցնելու հետ կապված, այլեւս հնարավոր չէ քողարկել, եւ այս նպատակով Փաշինյանը ձեռքերը ծալած չի նստում: Երեկ հայտնի դարձավ, որ Եվրամիությունը հիբրիդային արագ արձագանքման խումբ է պատրաստվում ուղարկել Հայաստան՝ ԱԺ ընտրություններին ընդառաջ սպառնալիքներին դիմակայելու համար: ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասն է այս մասին հայտարարել՝ նշելով, որ ԵՄ-ն դրանով ընդառաջել է Հայաստանի խնդրանքին: «Հարեւանության ժողովրդավարական դիմադրողականության աջակցությունը մնում է կարեւոր: Մենք Հայաստանին մենակ չենք թողնի՝ բախվելու արտաքին միջամտության հետ: Ճնշման տակ գտնվող ժողովրդավարությունները կարող են հույսը դնել Եվրոպայի վրա»,- ասել է նա: Որոշ տեղեկություններով, արտգործնախարար Արարատ Միրզոյանն է Բրյուսելին խնդրել՝ արագ արձագանքման խումբ ուղարկել Երեւան:

Հիշեցնենք. անցած դեկտեմբերին Բրյուսելից հայտնել էին նաեւ, որ պատրաստվում են 12 միլիոն եվրո աջակցություն տրամադրել Երեւանին, որ օգնեն՝ «ընտրություններին ընդառաջ հակահարված տալու ռուսական ապատեղեկատվությանը»: Հիմա, փաստորեն, Երեւանն է դիմել աջակցության խնդրանքով, ինչը մեկ բանի մասին է միայն վկայում. Նիկոլ Փաշինյանը հասկանում է, որ չունի հանրային աջակցություն, եւ փորձում է վերարտադրվել կեղծ վտանգներ բեմականացնելով եւ այդ հողի վրա Արեւմուտքի աջակցությունը ստանալով: Այսինքն, Հայաստանում փորձում են մոլդովական սցենարը կիրառել:

ԵՄ խումբը Հայաստան գալու դեպքում հիմնականում ԿԸՀ-ի հետ կաշխատի, կփորձեն կեղծ փաստարկներով կասեցնել այս կամ այն ուժի մասնակցությունն ընտրություններին: Զուգահեռ, նաեւ ՀՀ իրավապահներին «քսի կտան» ընդդիմադիրների վրա, որի «հրահանգը» Փաշինյանը տվեց օրերս՝ Կապանում ներկուսակցական քարոզարշավի ընթացքում: «Էսօր ձեւավորվող, կոնսոլիդացվող ընդդիմությունը, ըստ էության, հարյուր տոկոսով օտարերկրյա էմիսարներ են, մարդիկ եկել են՝ իրենց հայրենիքում ներկայանում են որպես օտար շահերի ներկայացուցիչ ու խոսում են արժանապատվությունից»,- մարտի 15-ին Կապանում քաղաքացիների հետ ունեցած զրույցում ասել է Նիկոլ Փաշինյանը:

Ինչպե՞ս են արտաքին ուժերը միջամտում Հայաստանում ընտրություններին: Սա ծանր մեղադրանք է, որն առաջին անգամ չի հնչում իշխանականների շուրթերից, եւ իրավական նորմալ պետություններում նման հայտարարություններից հետո պետք է հաջորդեր իրավական գործընթաց, բացահայտվեր կամ ժխտվեր օտար պետությունների գործակալների գոյությունը: Գուցե հիմա՝ ընտրություններին ընդառաջ, ականատես լինենք իրավապահների գործողություններին եւ բռնաճնշումներին, եւ այդ սցենարը չեն բացառում նաեւ իշխանականները:

Ի վերջո, ի՞նչ զարգացումներ են սպասվում նախընտրական շրջանում ԵՄ աջակցության ֆոնին, եւ արդյոք Հայաստանում հնարավո՞ր է կիրառել մոլդովական սցենարը: Քաղաքական գործիչ **Նաիրա Զոհրաբյանը** կասկած չունի, որ Նիկոլ Փաշինյանը հենց այդ ճանապարհով է շարժվում. «Ինձ համար պարզ է այն սցենարը, որ խաղարկվելու է Հայաստանում խորհրդարանական ընտրությունների ժամանակ. ես ասել եմ եւ պնդում եմ իմ տեսակետը, որ եթե Նիկոլ Փաշինյանն այս ընթացքում մարդ էլ ուտի ուղիղ եթերում, Արեւմուտքը դա համարելու է ժողովրդավարությունը փրկելու անձնազոհ քայլ ու զոհաբերություն, եւ դեռ մի բան էլ դատապարտելու ենք այն քաղաքական գործչին կամ ուժին, որ այս ռեժիմը փորձելու է ուտել: Իրենք կրկնելու են Մոլդովայի սցենարը, եւ բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք կարող են ալտերնատիվ ներկայացնել այս ռեժիմին, վերջին պահին, որ քաղաքական դաշտը չհասցնի վերադասավորվել, հանվելու են ընտրական ցուցակից, եւ որեւէ արձագանք, որեւէ դատապարտող ձայն ոչ միայն Արեւմուտքից չի լինելու, այլեւ չի լինելու իբր Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ սանձազերծած Ռուսաստանից, որի դեմ պայքարելու համար ԵՄ-ն պատրաստվում է դեսանտ իջեցնել Հայաստանում: Ի վերջո, հիշենք Փաշինյանի վերջին ելույթը ԵԽԽՎ-ում, որով դաբրո խնդրեց, եւ ծափահարությունները փաստեցին, որ այդ դաբրոն կա»:

Զոհրաբյանը միեւնույն ժամանակ հիշեց, որ Արեւմուտքը նույնն էր փորձում անել նաեւ Վրաստանում, որը չստացվեց: «ԵՄ-ն նույնկերպ ինչ-որ բաներ ուզում էր փրկել նաեւ Վրաստանում՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ, եւ Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ ԵՄ-ն Վրաստանում ինչ-որ բաներ փրկելու համար ծախսել է 50 մլն դոլար, բնականաբար, Իվանիշվիլու ուժին հաջողվել է թույլ չտալ, որ սրանք ինչ-որ բան փրկեն»,- ասում է, նաեւ հավելում՝ մեզ մոտ էլ կա փրկության մի ճանապարհ: «Դա համաժողովրդական ընդվզումն է, որ հարյուր հազարավոր հոգի լինեն փողոցում, բայց ես չեմ տեսնում այդ ուժը, որն աշխատում է այդ ուղղությամբ, որը մտածում է այդ ուղղությամբ, կամ որին հետաքրքրում է այդ ուղին: Փոխարենը՝ ես տեսնում եմ քաղաքական ուժեր, որոնց նպատակն առ այս պահը ընդամենը ապագա՝ Նիկոլ Վովայի Փաշինյանի անվան խորհրդարանում ընդդիմություն աշխատելն է»,- ասաց Զոհրաբյանը՝ նշելով, որ Ռուսաստանը Հայաստանում իշխանափոխության նպատակ չունի, եւ որ նրան ընդամենը ռուսական ուժեր են պետք՝ խորհրդարանում բալանս ապահովելու համար:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՏԻՐԱԴԱՎՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ, ՈՐ ՍԽԱԼՎԵԼ ԵՆ, ԽԱԲՎԵԼ ԵՆ

Տիրադավների շարքերը նոսրանում են, Հայ առաքելական եկեղեցու դեմ պայքարը, ինչպես Նիկոլ Փաշինյանն է սիրում ասել, «սառեցված» է: Մինչ իշխանական շրջանակներն ամիսներ առաջ պնդում էին, որ օրեցօր Եկեղեցու դեմ պայքարն ուժգնանալու է, եւ հոգեւորականները Վեհափառի դեմ են դուրս գալու, այժմ մենք տեսնում ենք լրիվ հակառակ պատկերը:

Երեկ տեղեկացանք, որ հերթական տիրադավը՝ Վայոց Ձորի թեմի առաջնորդ Աբրահամ սրբազանն է հեռանում զբաղեցրած պաշտոնից՝ իր բանավոր եւ գրավոր դիմումի համաձայն: Մեր տեղեկություններով, Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը եւս տատանումների մեջ է՝ ուզում է հետ կանգնել Եկեղեցու դեմ պայքարի մտքից, դրանից առաջ էլ ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան սրբազանն էր հետ կանգնել՝ միանալով Ավստրիայում եպիսկոպոսների հայտարարությանը: Տիրադավների խմբակը, կարելի է ասել, այժմ գոյություն չունի, իսկ իրենք՝ Մայր Աթոռին դավաճանած 7 եպիսկոպոսները, մեր տեղեկություններով, ընկճախտի մեջ են եւ ելքը չեն տեսնում:

Կոտայքի թեմի առաջնորդ **Առաքել արքեպիսկոպոս Քարամյանից** հետաքրքրվեցինք, թե չի՞ զղջում արդյոք, որ Եկեղեցու դեմ է դուրս եկել, եւ այժմ ինչպե՞ս է հարաբերվում Մայր Աթոռի հետ՝ այդքան զրպարտություններից ու ուխտադրժությունից հետո: Նա մեզ հետ զրույցում նշեց. «Ես իմ ծառայությունն եմ մատուցում՝ իմ թեմի համար, որեւէ արգելք, որեւէ խնդիր չկա իմ թեմում, ես չեմ կարող այլ բան ասել»: Արգիշտի Քյարամյանի հայրը հրաժարվեց այլ հարցի մասին խոսել:

Սուրբ Հակոբ եկեղեցու հոգեւոր հայր **Տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանը**, որը եւս միացել էր տիրադավների հայտարարությանը եւ մեզ հետ զրույցում վստահաբար պնդել, որ ամեն գնով Եկեղեցին «բարեկարգելու» են, այն հարցին, թե կստացվի՞ այս պայմաններում Եկեղեցում փոփոխություններ կատարել, նախկին ընդդիմադիր քահանան ասում է. «Աստված գիտե: Որեւիցե մեկը որեւիցե մեկի մասին չի կարող երաշխիքներ տալ, ես նորից եմ ասում՝ մեծ հույս ու հավատ ունեմ, որ բարեփոխումները տեղի կունենան: Ինչ վերաբերում է Մայր Աթոռին, ապա ես իմ հոտի հետ եմ միայն աշխատում, աշխատում եմ բացառապես իմ հոտի եւ համայնքի հետ, մեզ մոտ ամեն ինչ շատ էլ լավ է»:

Տեր Զարեհ քահանա Աշուրյանն էլ, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Եկեղեցու դեմ ձախողված պայքարի եւ տիրադավների խմբակի քայքայման մասին, շեշտում է. «Ամեն չար բան ունի իր վախճանը, այնպես, ինչպես այս պրոցեսները, որոնք ծրագրվել էին Հայ առաքելական եկեղեցու դեմ: Բնականաբար, այդ պրոցեսը պետք է շատ կարճ կյանք ունենար եւ վախճանվեր, ու որքան մարդիկ ավելի շուտ գիտակցեն իրենց ձախորդությունների մասին, այդքան ավելի լավ իրենց համար: Թե՛ այն հոգեւորականները եւ թե՛ այն մարդիկ, ովքեր փորձում էին Եկեղեցու դեմ քայլեր կատարել, տրվել էին ինչ-ինչ գայթակղությունների, այժմ հետ են կանգնում այս ամենից: Տարբեր հոգեւորականներ տարբեր վայրերում հայտարարում են, որ սխալվել են եւ խաբվել են: Այնպես որ, այդ պրոցեսը կարող ենք համարել ձախողված, թեպետ այն հենց սկսվելու օրվանից էր արդեն ձախողված: Այդ պայքարը ոչ թե ճշմարտության համար էր, այլ՝ ստի, իսկ սուտը երբեք չի կարող հաղթել ճշմարտությանը»: Տիրադավներն ինչպե՞ս են կարողանում Մայր Աթոռի հետ հարաբերություններ հաստատել: «Եկեղեցին ապաշխարության համար իր դռները բաց է պահում: Թեպետ մենք ոչինչ չենք բացառում, չգիտենք, թե ընտրություններից հետո ինչ կարող է լինել, աշխարհաքաղաքական իրավիճակն այնպիսին է, որ չենք կարող ոչինչ կանխատեսել կամ բացառել, սակայն մենք ներելու կողմնակից ենք, իսկ եկեղեցու դռները մշտապես բաց են բոլոր նրանց համար, ովքեր զղջում են»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՑՈՐԵՆ

ՊԱՊՈՅԱՆԻ ՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ, ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱԲՎԻ ՑՈՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԼԸ

Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

2025-ի աշնանը Հայաստանում ամենից շատ հանրային ուշադրության եւ քննարկումների արժանացած թեման, որի մասին ողջ երկիրը խոսում էր շաբաթներ, Ղազախստանից IV կարգի եւ տոքսիններով վարակման ենթակա, կերարտադրության համար նախատեսված ցորենի ներմուծումն էր, որ իշխանությունը պատրաստ էր հանրությանը հրամցնել որպես սննդամթերք: «Հրապարակի» զգոնության, հետեւողականության եւ հնչեցրած ահազանգերի, լրատվադաշտում բարձրացած աղմուկի, հանրության հետաքրքրվածության եւ բացասական վերաբերմունքի հանրագումարում հնարավոր եղավ էական խնդիր լուծել, որը միայն այժմ, հետահայաց հայացքով կարելի է ընդգրկել եւ գնահատել:

2025-ի նոյեմբերին Ղազախստանից ներմուծված ցորենի առաջին խմբաքանակը՝ ընդամենը 1000 տոննա, ալյուրի չի վերածվել, օգտագործվել է խմիչքի արտադրության եւ կենդանակերի համար: Այդ առաջին խմբաքանակից հետո Ղազախստանից ցորենի նոր ներմուծում Հայաստան չի եղել: Սա փաստ է եւ սա լրագրողների ու հասարակության հաղթանակն է: Այդքան գիտական եւ լաբորատոր տեղեկություն, որ հրապարակվեց, ավելի մեծ ծավալով էլ փոխանցվեց իշխանությանը, սպասելի է, որ վերջնահաշվում հասներ կենդանուց տարբերվող ցանկացած արարածի գիտակցությանը եւ հանրային առողջության հետ խաղալու վտանգավոր արկածախնդրությունից ետ պահեր: Բարեբախտաբար, ՔՊ-ական արարածների գիտակցությանն էլ հասավ:

Ընդսմին, Հայաստանում հազիվ թե որեւէ մեկը խնդիր ունենա ղազախական ծագման ցորենի կամ կենդանակերի ներմուծման հետ: Խնդիրը ղազախական որակյալ ցորենը թողած, գիտակցաբար IV կարգի, կերարտադրության մեջ օգտագործվող, հետո էլ երաշտային բնակլիմայի արդյունքում հասկում ծլարձակած, հետեւաբար՝ անխուսափելիորեն տոքսիններով վարակման ենթակա ցորեն ներմուծելու եւ դա որպես սննդամթերք մատուցելու aφերա-ն էր:

Այդ aφերա-ի այցեքարտն ու դեմքը Փաշինյանից հետո կամ գուցե Փաշինյանից էլ առաջ, էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն էր՝ առատության եղջյուրներից թափվող իր հայտարարություններով եւ տեսանյութերով: Կարմիր գրքում գրանցվելու ենթակա հենց այս արարածն էր 2025-ի նոյեմբեր-դեկտեմբերին հայտարարում, թե՝ ժողովուրդ, դուք Ղազախստանից ներկրված ցորենն արդեն կերել եք: Ընդսմին, գիտակցության հետ այն խորության խնդիրներ ունի, որ դա իր տեսանյութերում ասում էր ավելի վաղ, քան Ղազախստանից ներմուծված ցորենի՝ Հայաստանում անցկացված լաբորատոր փորձաքննության իբրեւ թե արդյունքներ սկսեցին հրապարակվել:

Սակայն էլ ավելի հետաքրքիր է, թե Պապոյանն ինչ էր ասում դեկտեմբերին Ղազախստանից ցորենի նոր խմբաքանակներ ներմուծելու մասին: Մեջբերում եմ դեկտեմբերին ԱԺ միջանցքներում կայացած ճեպազրույցներից հայտնի մի հատվածի սղագրությունը (https://www.youtube.com/watch?v=3zyHWL5ye4I հղումով).

«- Պրն Պապոյան, 4-րդ կարգի ցորենի հացը, վերջապես, կերա՞ք, թե՞ չէ:

- Չորրորդ կարգի ցորեն չի եղել, եղել է երրորդ կարգի ցորեն: Բոլորս այդ հացը կերել ենք: Այդ 2000 տոննա ցորենը, սիրելի՛ հայրենակիցներ, դա մեր մեկ օրվա եւ մի քանի ժամվա սպառումն է: Ամբողջ Հայաստանի բնակչությունն այդ հացը կերել ենք, վերջացրել ենք: Այդ ինչ-որ մի օրվա ձեր կերած լավաշը կամ буханка-ն, այ, այդ հացից է եղել: Այնպես որ՝ ես էլ եմ կերել, դու էլ ես կերել:

- Պրն Պապոյան, այս նոր խմբաքանակը, որ գալիս է, նորի՞ց 3-րդ կարգ է:

- Երրորդ կամ երկրորդ:

- Եվ նույն քանակի՞ է, 2000 տոննա՞...

- Ավելի շատ, ավելի շատ»:

Դեկտեմբերի առաջին կեսին հնչեցրած այս անհոգ ստախոսությունից մեկ ամիս էլ չանցած, ամանորյա եւ սուրբծննդյան տոներից անմիջապես հետո՝ հունվարի 8-ին, թե 9-ին, Պապոյանն ինքնաբուխ որոշում է գրառում կատարել եւ դեկտեմբերյան հայտարարությունները հերքել: Իբր տարեկան ցուցանիշներ ամփոփելու սոուսի ներքո գրառում եւ մամուլով տարածում է. «2025թ. Ադրբեջանի տարածքով, երկաթուղու միջոցով Հայաստան է մտել 6 580 տոննա հացահատիկ, որից 1000 տոննան՝ ղազախական եւ 5 580 տոննան՝ ռուսական, ինչպես նաեւ՝ 1210 տոննա ադրբեջանական բենզին»:

Ինչ միջատ էր հանկարծ խայթել Պապոյանին: Պարզվում է, հաղորդումը, որ դեկտեմբերի 18-ին մենք ներկայացրել էինք ՀՀ գլխավոր դատախազություն եւ «Հրապարակի» կայքում էլ հրապարակել, դատախազությունում 15-20 օր ուսումնասիրելուց հետո որոշում են ուղարկել ՆԳՆ քրեական ոստիկանություն՝ որոշակի ստուգումներ կատարելու առաջադրանքով: Մեր հաղորդումը՝ դատախազության ուղեկցող գրությամբ, ՆԳՆ-ում մուտքագրվում է հունվարի 8-ին: Նույն օրն էլ Պապոյանը հավանաբար տեղեկանում է, որ ղազախական ցորենի հարցով դատախազություն ներկայացված հաղորդմանն ինչ-որ ընթացք է տրվել, ինչ-որ ուսումնասիրություն է կատարվում, եւ որոշում է իրեն ապահովագրել՝ նախկին ասածներից հրաժարվելով: Դեկտեմբերին ասվում էր՝ մի 2000 տոննա ցորեն է եկել Ղազախստանից, եւս նույնքան կամ ավելի ճանապարհին է, բոլորդ այդ ցորենը կերել եք, նորից կուտեք: Հունվարին ստախոսությունը դադարեցնելով՝ Գեւորգ Պապոյանը խոստովանում է՝ 2025թ. ընթացքում Ղազախստանից Ադրբեջանի տարածքով Հայաստան է ներմուծվել 1000 տոննա ցորեն: Ընդամենը, եւ վերջ:

Թե դատախազությունում եւ քրեական ոստիկանությունում հաղորդման ուսումնասիրությունն ինչ ընթացք է ունեցել եւ ուր է հասել, կներկայացնենք հաջորդիվ: Իսկ այժմ՝ ամենաէականը: Ինչո՞ւ ղազախական ցորենի հարցով դեկտեմբերին հաղորդում ներկայացրինք ՀՀ դատախազություն (այն կից հրապարակում ենք): Եվ ինչո՞ւ ղազախական ցորենի թեման չի մնացել անցյալում, այլ տեղափոխվել է ապագա, ինչից ելնելով էլ՝ այսօր հարկավոր է տեղեկացվածություն եւ գործողություն: Ղազախական ցորենին առնչվող ամենաէական եւ մտահոգիչ իրողության մասին ես մինչ այժմ հրապարակավ չեմ գրել: Այդ մասին առաջին անգամ գրել եմ դատախազությանը, այժմ ժամանակն է՝ նաեւ հասարակությանը տեղեկացնելու:

2025թ. հոկտեմբերին, երբ Ղազախստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ համաձայնություն հասանելի դարձավ, Գեւորգ Պապոյանը հրապարակեց հայտարարություն, որ

ԿԱ՛Մ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԱ՛Մ ՈՉԻՆՉ

Ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ… Իսկ այն, որ «Հայաստան» դաշինքի ձեւաչափի եւ վարչապետի թեկնածուի անունը հանրայնացնելուց հետո ՔՊ-ն պետք է ընկներ հիստերիայի մեջ, ինձ համար բոլորովին անսպասելի չէր:

Արցախյան ազատամարտի փուլերից մեկում, իսկ ավելի ստույգ՝ Շուշիի եւ Քարվաճառի ազատագրման միջեւ, Նախիջեւանից փախեփախ էր սկսվել: Իրանի Իսլամական Հանրապետության տարածք փախչող թուրքերը վայնասուն էին բարձրացրել՝ ամա՛ն, փախեք, հայերը գլուխ կտրելով գալիս են… Այդպիսի բան չկար, իհարկե, պարզապես լեղաճաք էին եղել:

Այսօր ՔՊ-ն է այդ վիճակում, ես գիտեի, որ «Հայաստան» դաշինքի ձեւաչափի եւ վարչապետի թեկնածուի անվան հանրայնացումից հետո թթվածինը չի բավարարելու իշխող կուսակցությանը: Ահավասիկ, անցել են իրենց պլան «Ֆ»-ին՝ ձեռքերը փրփուրներին գցելուն: Վարչապետի աշխատակազմը հայտարարել է, թե Ռոբերտ Քոչարյանն ընդդիմության միասնական թեկնածուն է: Սրանք այսքան բան են հասկացել «Հայաստան» դաշինքի հանդիսավոր պրեզենտացիայից: Մոռացել են, որ 2021 թվականից հետո իրենց ձախավեր կառավարման եւ շարունակական պարտությունների արդյունքում Հայաստանում ձեւավորվել է առնվազն եւս երկու խոշոր ընդդիմադիր «բլոկ»՝ ի դեմս «Ուժեղ Հայաստանի» եւ «Բարգավաճ Հայաստանի», որոնց առաջնորդները պակաս «ամբիցիոզ» չեն Հայաստանն այս հիմար վիճակից դուրս բերելու հարցում: Ինչո՞ւ է, ուրեմն, ՔՊ-ին թվում, որ քաղաքական դաշտում ինքը մնացել է մեն-մենակ «Հայաստան» դաշինքի դեմ:

Բայց եկեք մի պահ մտածենք, որ ՔՊ-ի պլան «Ֆ»-ն հանճարեղ է… Ինչ-որ տեղից «կպցրել» են կամ ինչ-որ մեկին հավար են գցել, որ իրենց օգնության հասնեն: Ի՞նչ է ստացվում, ՔՊ-ն վախենո՞ւմ է «Հայաստան» դաշինքից: Նույն ժողովուրդը չի՞ դրսում, որ իրենց 680 հազար ձայն է տվել: 680 հազար ձայն ունեցող ուժն այդքան վախկոտ կլինի՞: Իսկ գուցե, այնուամենայնիվ, բա՞ն է փոխվել՝ ժողովրդի մեջ կամ ՔՊ-ում: Դե, գիտեք, նախընտրական ժամանակահատվածում ընտրազանգվածները, սովորաբար, փորձում են կողմնորոշվել, իսկ ՔՊ-ն առանձնապես բան չի արել, որ դեպի իրեն բերի որեւէ ընտրազանգված: ՔՊ-ն մնացել է 2021 թվականում, մինչդեռ դրանից անցել է 5 տարի, եւ այդ ընթացքում ՔՊ-ն միայն իր պարտությունների քանակն է ավելացրել՝ կրելով ավելի դաժան պարտություններ: Անկախ հարցումների արդյունքներն ուղղակի «լացելու» են իշխանությունների համար. մնացել են իրենց խմբակի եւ ընտրակեղծիքների հույսին: Եվ, ահա, գործի են դրել իրենց պլան «Ֆ»-ն՝ որ կարող ա պատահի՝ Սամվել Կարապետյանի եւ Գագիկ Ծառուկյանի հետեւորդների մի մասը ձայն տա ՔՊ-ին՝ չուզենալով, որ հաջորդ վարչապետը լինի Ռոբերտ Քոչարյանը: Այլապես ինչո՞ւ պիտի ափաշկարա ստեին, թե Սամվել Կարապետյանն ու Գագիկ Ծառուկյանն ինքնուրույն «ֆակտոր» չեն եւ սատարում են Ռոբերտ Քոչարյանի միասնական թեկնածությանը:

ՔՊ-ն, ձեռքը փրփուրներին գցած, փորձում է պառակտել ընդդիմությանը: Վարչապետի կաբինետը հասկացել է, հավանաբար, որ ընդդիմությունը՝ լինի մեկ անձով, թե առանձին խոշոր բլոկներով, ընտրություններին ընդառաջ միավորվելու է մեկ պահանջի շուրջ՝ իշխանափոխություն: Հենց դրա դեմ է պայքարում իշխանությունը… Պահել աթոռները՝ ինչ գնով էլ լինի, խառնակչություն անել, նսեմացնել ընդդիմության համախմբող իմիջը, թույլ չտալ իշխանափոխության միասնական օրակարգ ձեւավորել: Ուրիշ անելիք չունեն հիմա, ամեն ինչ փորձել են՝ չի օգնում: Հակաեկեղեցական արշավն այնտեղ մեռավ, «ուրախ ավտոբուսին» ավելի խայտառակ վախճան է սպասվում, ժողովուրդը չի գալիս, մնացել են փոքրիկ խմբակով, իրենք՝ իրենց էշ խելքը:

Հայտնի ճշմարտություն է, որ իշխանափոխություններից հետո կյանքը կանգ չի առնում: ՔՊ-ի մոտ միանգամայն հակառակ համոզմունքն է ձեւավորվել՝ իշխանություն չեղան՝ կորած են: Իսկ դա գալիս է իրենց վախերից՝ Արցախի կորստի, Արցախի հայաթափման, հազարավոր զոհերի, հայրենական տարածքների կորստի, շեն երկիրը քանդելու համար պատասխանատվության են ենթարկվելու բոլորը: Մինչդեռ պատասխան տալ չեն ուզում: Կա՛մ իշխանություն, կա՛մ ոչինչ… Սա է ՔՊ-ի այսօրվա կարգախոսը: Իշխանափոխությունից հետո իշխանական փոքրիկ խմբակը, քանի տոկոս ձայն էլ հավաքած լինի, խորհրդարան չի գալու: Որ օրը կորցրին վարչապետի աթոռը, այդ օրն էլ ՔՊ-ն փչելու է իր վերջին շունչը:

ՀԳ. *Հոդվածի սկզբում նշել էի, որ ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ: Բանից պարզվում է, սակայն, որ ՔՊ-ն կարող է այնպիսի բաներ անել, որ իմ մտքով չէր էլ անցնի: Օրինակ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին հոսանքազրկելը: Նման բան կարող էր անել միայն Ռոմանոսը, այն էլ՝ մեկ օր անց այն բանից հետո, երբ ՀԱԿ-ի համագումարին մասնակցեց «Ուժեղ Հայաստանի» ներկայացուցիչը: Ես տպավորություն ստացա, որ ՔՊ-ն արդեն որոշել է ընդդիմության միասնական թեկնածուին՝ Սամվել Կարապետյան: Երկար մտածեցի այս ուղղությամբ, բայց ի վերջո հոգնեցի: Ինչպես «դասականն» է ասել՝ իմ էշ խելքը, որ ՔՊ-ի խուճապային քայլերի մեջ տրամաբանություն եմ փնտրում:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՔԸԼԸՉԻ ՃՈՒՏԸ

Ռուբեն Ռուբինյանը խիստ վիրավորվել է Սամվել Կարապետյանի եղբայր Կարեն Կարապետյանից. Կարապետյանը հարցրել է, թե ում փողերով է Ռուբինյանը սովորել արտասահմանյան բուհերում, ում ճուտն է նա: Ռուբինյանը որոշել է խոսքի տակ չմնալ եւ պատասխանել է Կարապետյանին՝ նրան անվանելով Սերժ Սարգսյանի ճուտ: Ճուտը երկու դեպքում էլ ոչ թե ձագի իմաստն ունի, այլ՝ սպասարկուի, ենթակայի: Կարեն Կարապետյանն իսկապես եղել է Սերժ Սարգսյանի ենթական, եղել է նրա աշխատակազմի ղեկավարը, եղել է պետական ծառայող, եւ դրա մեջ որեւէ վիրավորական բան չկա: Կարապետյանը չի եղել Սարգսյանի սպասարկուն, որովհետեւ կայացած եւ իր տեսակետն ունեցող մարդ է, նրանց հարաբերություններից տեղյակ բոլորը կփաստեն, որ Կարեն Կարապետյանի եւ Սերժ Սարգսյանի հարաբերությունները չեն եղել ճտի եւ տիրոջ հարաբերություններ: Ռուբինյանն իր պատասխանում պարզաբանել է, որ ինքը Լոնդոնում եւ Վարշավայում սովորել է Եվրամիության փողերով, ինչ-որ գրանտային ծրագրով, որն ամբողջությամբ փակել է իր ուսման ծախսերը: Բայց չի պատասխանել Կարապետյանի հիմնական հարցադրմանը՝ ո՞ւմ ճուտն է ինքը, ավելի կոնկրետ՝ ո՞ւմ սպասարկուն է Ռուբինյանը, ո՞ւմ շահերն է սպասարկում: Իսկ դա ավելի կարեւոր է: Փորձենք պատասխանել այդ հարցին:

Ռուբինյանը հպարտանում է, որ ինքը չափազանց ուսյալ մեկն է, որ, ի տարբերություն Սամվել Կարապետյանի, որը խուսափում է հարցազրույցներ տալուց, որովհետեւ չի կարող նորմալ խոսել, մինչդեռ ինքը մշտապես հանդես է գալիս հանրային խոսքով: Բայց հենց այդ հանրային խոսքն էլ մատնում է նրա ճտությունը, մատնում է նրա՝ ում ճուտ լինելը: Ընդամենը չորս օր առաջ Ռուբինյանը մի ելույթ էր հրապարակել, որտեղ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին, որպես մեղադրանք, ներկայացրել էր նրա բելառուսամետ լինելը, որ նրա որդին թաքնվում է Բելառուսում, այն դեպքում, երբ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է, որ 44-օրյա պատերազմում օժանդակել են Ադրբեջանին, եւ դրանից հետո Հայաստանի իշխանությունը հրաժարվել է այցելել Բելառուս: Ռուբինյանի ասածն այն է, թե, տեսեք, ինչքան հայրենասեր ու սկզբունքային են Հայաստանի իշխանությունները, որ չեն այցելում Ադրբեջանին աջակցող Բելառուս, իսկ, այ, Ծառուկյանն առանց ամաչելու մտերմություն է անում այդ երկրի նախագահի հետ, դեռ մի բան էլ որդուն ուղարկել է Բելառուս, որ թաքնվի փաշինյանական արդարադատությունից, տղային կամավոր պատանդ չի հանձնել Փաշինյանին, որ Փաշինյանը մի 100 միլիոն դոլար էլ Ծառուկյանից ուզեր՝ տղայի ազատության դիմաց:

Բելառուսի եւ Ադրբեջանի նախագահների ջերմ հարաբերությունների մասին գիտեն բոլորը, նրանք դա չեն էլ թաքցնում: Բայց ինչպիսի սկզբունքային գործիչներ են Փաշինյանն ու Ռուբինյանը, որ չեն այցելում Ադրբեջանին աջակցած Բելառուս, բայց հաճախակի այցելում են Թուրքիա, մի երկիր, որը ոչ թե աջակցել է Ադրբեջանին, այլ, ըստ էության, Հայաստանի եւ Արցախի դեմ կազմակերպված պատերազմի հեղինակներից է, թուրք գեներալներն ու ռազմական մասնագետներն են ղեկավարել ռազմական գործողությունները, Թուրքիան հազարավոր սիրիացի վարձկաններ է տեղափոխել Ադրբեջան, Ադրբեջանին տրամադրել ամենաժամանակակից ռազմական տեխնիկա, սպառազինություն, հետախուզական տվյալներ, իսկ Բաքվում կազմակերպված հաղթանակի շքերթին մասնակցում էր ոչ թե Բելառուսի նախագահ Լուկաշենկոն, այլ՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որը, ըստ էության, շքերթն ընդունողներից էր: Թուրքերը մի քանի անգամ հայտարարել են, որ առանց իրենց աջակցության Ադրբեջանը չէր հաղթի, պատերազմի ամբողջ ընթացքում Նիկոլ Փաշինյանն էլ էր պնդում, որ Թուրքիան վերադառնում է, որպեսզի ավարտին հասցնի Հայոց ցեղասպանությունը:

Ինչո՞ւ են Փաշինյանը եւ Ռուբինյանն այցելում Թուրքիա, հանդիպում Թուրքիայի նախագահ Էրդողանի եւ դեսպան Սերդար Քըլըչի հետ, ինչո՞ւ են նրանց ոտքերի տակ դնում ոչ միայն իրենց արժանապատվությունը (չեղած բանը հնարավոր էլ չէ ոտքերի տակ դնել), այլ նաեւ՝ Հայաստանի: Որովհետեւ նրանք Թուրքիայի, Էրդողանի եւ Քըլըչի ճուտն են: Այո, ճուտն են՝ այդ բառի այն իմաստով, որ սպասարկում են այդ մարդկանց, նրանց ներկայացրած երկրի շահերը, միայն մի բանի համար, որ թույլ տան, օգնեն՝ Հայաստանում իշխանության մնալ: Դուք տեսել եք լուսանկարները, թե ինչպես է Փաշինյանը հարաբերվում Էրդողանի հետ, իսկ Ռուբինյանը՝ Քըլըչի, դրանց դեմքի շողոքորթ, քծնալից արտահայտությունը հարիր է միայն սպասարկուին:

Երբ Կարեն Կարապետյանը հարցնում է, թե ում ճուտն է Ռուբինյանը, ում փողերով է սովորել Եվրոպայում, նա հենց դա նկատի ունի, որ գուցե նա թուրքական փողերո՞վ է սովորել, որ դարձել է Թուրքիայի Սերդար Քըլըչի ճուտը: Ռուբինյանը պարզաբանեց, որ փողերը թուրքական չեն եղել, չնայած ինքը Թուրքիայում եւս սովորել է, որի մասին աշխատում է շատ չխոսել: Թե ինչ է սովորել՝ դարձյալ կարելի է դատել նրա եւ Սերդար Քըլըչի հետ շփումների տեսագրությունը նայելով:

Ռուբեն Ռուբինյանը խոսում է Հայաստանի անկախության եւ ինքնիշխանության պաշտպանությունից, եւ երբ սրանք ինչ-որ բանից են խոսում, պետք է սպասել ճիշտ հակառակին. Արցախի օրինակը, Հայաստանի տասնյակ հազարավոր հեկտարների՝ ադրբեջանական օկուպացիայի տակ գտնվելը՝ դրա վառ ապացույցներ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԱՆՀԵՏԱՆՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

*Մեր զրուցակիցն է Ախթալայի Սուրբ Աստվածածին վանքի հոգեւոր հովիվ **Տեր Հեթում քահանա Թարվերդյանը**:*



- Նիկոլ Փաշինյանն ասաց, որ եկեղեցու խորանից «Արցախ» բառը հնչեցնելը ոչ այլ ինչ է, քան կոնֆլիկտի հրահրում, պատերազմի կոչ. «Եկեղեցին ստանձնել է պատերազմի կուսակցության ղեկավարումը»: Ինչի՞ մասին է սա, իրո՞ք Եկեղեցին պատերազմ է հրահրում:

- Նիկոլ Փաշինյանի այն խոսույթը, որով նա մեղադրում է Հայ առաքելական եկեղեցուն՝ պատերազմի հրահրման մեջ, առաջին հերթին պետք է դիտարկել ոչ թե աստվածաբանական կամ բարոյական, այլ քաղաքական եւ պատմաքաղաքական համատեքստում: Նման գնահատականների հիմքում սովորաբար ընկած է 3 գործոն՝ իշխանության լեգիտիմության ճգնաժամը, պատմական պատասխանատվության վերաբաշխումը եւ ներքաղաքական պայքարի տրամաբանությունը: Առաջին. պատասխանատվության տեղափոխման փորձ: Արցախյան երկրորդ պատերազմի եւ դրա հետեւանքների ֆոնին Հայաստանի քաղաքական դաշտում առաջացավ պատասխանատվության հարց: Պատմությունը ցույց է տալիս, որ նման իրավիճակներում իշխանությունները հաճախ փորձում են մեղքի մի մասը տեղափոխել այլ ինստիտուտների վրա՝ բանակի, ընդդիմության կամ հասարակական կառույցների: Հայ առաքելական եկեղեցին՝ որպես ազգային ինքնության կարեւորագույն հաստատություններից մեկը, բնականաբար, հայտնվում է այդ դիսկուրսի մեջ: Սակայն պատմական փաստն այն է, որ Եկեղեցին հայկական պետականության պատմության ընթացքում հիմնականում հանդես է եկել ոչ թե պատերազմ նախաձեռնողի, այլ ժողովրդի ինքնության պահպանման եւ բարոյական դիմադրության կենտրոնի դերակատարմամբ: Երկրորդ. ազգային հիշողության եւ քաղաքական ծրագրի հակադրություն: Երբ եկեղեցու խորանից հնչում է «Արցախ» բառը, դա ընկալվում է որպես պատմական հիշողության եւ ազգային ցավի արտահայտություն, ոչ թե ռազմական կոչ: Սակայն իշխանության որոշ ներկայացուցիչներ փորձում են դա ներկայացնել որպես խաղաղության գործընթացին խոչընդոտող գործոն: Այս հակադրությունը, իրականում, արտացոլում է ավելի լայն բանավեճ՝ ինչպիսի հիշողությամբ պետք է ապրի հասարակությունը պատերազմից հետո՝ արդյո՞ք պետք է շարունակել խոսել կորուստների մասին, թե՞ պետք է, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, սահմանափակել այդ հիշողության արտահայտումը: Երրորդ. պետություն-եկեղեցի հարաբերությունների խնդիրը: Հայաստանի պատմության մեջ պետության եւ եկեղեցու հարաբերությունները միշտ էլ եղել են բարդ եւ երբեմն՝ լարված: Բայց նույնիսկ ամենախիստ ժամանակներում պետական գործիչները հազվադեպ են Եկեղեցուն մեղադրել պատերազմի հրահրման մեջ: Այդ պատճառով նման ձեւակերպումն ավելի շատ կարելի է դիտարկել որպես քաղաքական հռետորաբանություն, որի նպատակն է՝ նվազեցնել Եկեղեցու ազդեցությունը հանրային կարծիքի վրա: Եթե հարցին մոտենանք սառը պատմական տրամաբանությամբ, ապա պետք է արձանագրել, որ Եկեղեցու կողմից Արցախը հիշատակելը դժվար է որակել որպես պատերազմի կոչ: Դա առավելապես ազգային ողբերգության հիշողության պահպանում է: Իսկ իշխանության կողմից նման մեղադրանքների հնչեցումը կարելի է հասկանալ որպես ներքաղաքական պայքարի եւ պատասխանատվության վերաբաշխման փորձ, որը պատմության մեջ բազմիցս է հանդիպել տարբեր երկրներում: Այլ կերպ ասած՝ այստեղ խոսքը ոչ այնքան պատերազմի մասին է, որքան՝ հիշողության, քաղաքական պատասխանատվության եւ հասարակության վրա ազդեցության համար մղվող պայքարի:

- Նիկոլ Փաշինյանը մտովի հասել է 405 թվական, հիշել Մեսրոպ Մաշտոցին եւ ասում է, որ 405 թվականին էլ Հայաստանը եղել է նույն խաչմերուկում, ինչ 2026-ին է, եւ ասում է՝ այնպես շարունակենք մեր ճանապարհը, որ հետագայում «Ողբամ քեզ, Հայոց աշխարհ»-ը չգրվի:

- Վարչապետ Փաշինյանի այն միտքը, թե Հայաստանը 2026 թվականին կանգնած է նույն պատմական խաչմերուկում, ինչ 405-ին՝ Մեսրոպ Մաշտոցի ժամանակ, առաջին հայացքից հնչում է որպես պատմական զուգահեռ: Սակայն եթե հարցին մոտենանք սառը պատմագիտական տրամաբանությամբ, ապա այդ համեմատությունը բավական խնդրահարույց է: Նախ՝ 405-ի իրական պատմական համատեքստը: 405 թվականը կապված է հայոց գրերի ստեղծման հետ, ինչը հայ մշակույթի եւ ինքնության ամենամեծ իրադարձություններից է: Այդ գործընթացը տեղի էր ունենում կոնկրետ պատմական իրավիճակում՝ Հայաստանի բաժանումից հետո, երբ երկիրը գտնվում էր բյուզանդական եւ սասանյան կայսրությունների ազդեցության տակ: Հայոց գրերի ստեղծումն այդ պայմաններում ոչ թե քաղաքական կոմպրոմիսի, այլ ազգային ինքնության պահպանման ռազմավարություն էր, նպատակ ուներ ամրապնդել լեզուն, հավատը եւ կրթությունը, որպեսզի ժողովուրդը չկորցներ իր մշակութային ինքնությունը՝ արտաքին գերիշխանության պայմաններում: Երկրորդ. «Ողբամ քեզ, Հայոց աշխարհ» հիշատակման խնդիրը: Վարչապետն իր խոսքում ակնարկում է այն ողբերգական տեքստը, որը գրվել է ավելի ուշ՝ Մովսես Խորենացու կողմից: Այդ ստեղծագործությունը ծնվել է ոչ թե ճիշտ քաղաքական ընտրության արդյունքում, այլ՝ պետականության անկման եւ ներքին քայքայման հետեւանքով: Այսինքն՝ պատմականորեն, «Ողբը» պատճառ չէ, այլ՝ այն ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական ճգնաժամի հետեւանք: Երրորդ. պատմական զուգահեռների սահմանափակությունը: Պատմության մեջ նման համեմատությունները հաճախ օգտագործվում են քաղաքական խոսքում, սակայն դրանք հազվադեպ են ամբողջությամբ համընկնում իրականության հետ: 5-րդ դարի Հայաստանը եւ 21-րդ դարի Հայաստանը գտնվում են բոլորովին տարբեր աշխարհակարգերում: Այդ պատճառով 405 թվականի ընտրությունը ներկայացնել որպես նույն տիպի «քաղաքական խաչմերուկ»՝ պատմագիտական տեսանկյունից բավական պայմանական է: Եթե փորձենք սառը գնահատել այս հայտարարությունը, պետք է ասել հետեւյալը. 405 թվականին հայերը կանգնած էին ոչ թե աշխարհաքաղաքական ընտրության, այլ՝ մշակութային ինքնության պահպանման խնդրի առաջ: Մեսրոպ Մաշտոցի լուծումը եղավ լեզվի, կրթության եւ հավատքի ամրապնդումը: Իսկ «Ողբամ քեզ, Հայոց աշխարհ»-ը ծնվեց այն ժամանակ, երբ այդ արժեքները թուլացան, եւ պետականությունը քայքայվեց: Այդ պատճառով պատմության դասը, եթե այն ճիշտ կարդանք, ավելի շուտ հետեւյալն է. ազգային ինքնության ամրապնդումը երբեք չի հակասել պետականության պահպանմանը, այլ եղել է դրա հիմնական հենարանը:

- Վերջերս Փաշինյանը երբ եկեղեցի է այցելում, պատարագների ժամանակ Վեհափառի անունը չի զեղչվում: Նա լուռ լսում է եւ հեռանում: Սա անում է ընտրությունների նախաշեմին, որ իրավիճակը չլարվի՞, թե՞ հասկացել է, որ Եկեղեցու դեմ պայքարում ձախողվել է:

- Դա պետք է դիտարկել ոչ թե միայն կրոնական, այլ, նախեւառաջ, քաղաքական վարքագծի տրամաբանության մեջ: Նման իրավիճակները հաճախ ունենում են բավական պարզ բացատրություն: Առաջին. ընտրության գործոնը: Քաղաքական գործիչներն ընտրությունների նախաշեմին սովորաբար խուսափում են հասարակության մեջ արդեն գոյություն ունեցող լարվածությունները խորացնելուց: Հայ առաքելական եկեղեցին շարունակում է մնալ հանրային վստահություն ունեցող ինստիտուտներից մեկը, եւ ընտրական փուլում դրա հետ բացահայտ հակամարտությունը կարող է իշխանության համար լրացուցիչ ռիսկեր ստեղծել: Այդ պատճառով եկեղեցի այցելելը եւ պատարագին լուռ մասնակցելը կարող են դիտվել որպես լարվածությունը ժամանակավորապես չխորացնելու մարտավարություն: Երկրորդ՝ քաղաքական պայքարի սահմանների գիտակցումը. Հայաստանի պատմությունը ցույց է տալիս, որ պետություն-եկեղեցի հարաբերությունները երբեմն եղել են լարված, սակայն որեւէ իշխանություն երկարաժամկետ հաջողություն չի ունեցել, երբ փորձել է Եկեղեցին դարձնել քաղաքական պայքարի թիրախ: ՀԱԵ-ն ազգային ինքնության կարեւոր տարր է, եւ դրա դեմ ուղղված բացահայտ պայքարը հաճախ բերում է հակառակ արդյունքի՝ հասարակության մի հատվածին համախմբելով Եկեղեցու շուրջ: Երրորդ. խորհրդանշական ժեստի քաղաքական իմաստը: Այն, որ վարչապետը պատարագի ընթացքում չի արձագանքում Վեհափառի անվան հիշատակմանը եւ լուռ հեռանում է, նույնպես խոսուն է: Սա, ըստ էության, քաղաքական չեզոքության ցուցադրություն է՝ առանց հրապարակային առճակատման մտնելու Եկեղեցու հետ: Եթե հարցին մոտենանք սառը քաղաքական տրամաբանությամբ, ապա հավանական է, որ այստեղ գործում են 2 գործոնները միասին. ընտրությունների նախաշեմին լարվածությունը չխորացնելու հաշվարկը եւ այն գիտակցումը, որ Եկեղեցու դեմ բաց ճակատով պայքարը քաղաքականապես արդյունավետ չէ: Այլ կերպ ասած՝ քաղաքական պրագմատիզմի դրսեւորում, երբ իշխանությունը փորձում է խուսափել մի ճակատից, որը կարող է ավելի շատ վնասել, քան օգուտ բերել:

- Փաշինյանն աշխատանքից ազատեց ցեղասպանության թանգարանի տնօրենին, քանի որ նա Վենսին ներկայացրել էր Սումգայիթի ու Բաքվի ջարդերի պատմությունը: Կարծում եք՝ նա ամեն ինչ կանի՞, որ «Հայոց ցեղասպանություն» եւ «Արցախ» բառերը մոռացվեն:

- Թանգարանի տնօրենի պաշտոնանկության շուրջ առաջացած քննարկումը պետք է դիտարկել ավելի լայն՝ քաղաքական հիշողության եւ պետական քաղաքականության համատեքստում: Խոսքը միայն մեկ պաշտոնանկության մասին չէ, այլ այն մասին, թե պետությունն ինչ ձեւով է ցանկանում ներկայացնել իր պատմական հիշողությունը: Առաջին. պատմական հիշողության քաղաքական կառավարումը: Պետությունները հաճախ փորձում են որոշ չափով կարգավորել, թե պատմության որ հատվածներն ինչպես ներկայացվեն պաշտոնական հարթակներում: Սակայն հայ ժողովրդի դեպքում կա 2 թեմա, որոնք վաղուց դուրս են պետական քարոզչության սահմաններից եւ դարձել են ազգային ինքնության հիմքային տարրեր՝ Հայոց ցեղասպանությունը եւ արցախյան հակամարտությունը, որը կապված է Լեռնային Ղարաբաղի պատմության հետ: Այս 2 թեման ձեւավորվել են ոչ միայն պետական քաղաքականության, այլ նաեւ հասարակական հիշողության, գիտության, գրականության եւ սփյուռքի գործունեության շնորհիվ: Երկրորդ. «Արցախ» բառի շուրջ քաղաքական զգայունությունը: Վերջին տարիներին Հայաստանի իշխանությունը փորձում է փոխել տարածաշրջանային քաղաքականության բառապաշարը՝ հատկապես խաղաղության գործընթացի շրջանակում: Այդ պատճառով «Արցախ» բառի օգտագործումը երբեմն դիտարկվում է որպես քաղաքական հայտարարություն: Սակայն պատմականորեն այդ անվանումը գոյություն ունի դարերով, հանդիպում է միջնադարյան աղբյուրներում, հետեւաբար՝ այն չի կարող դիտվել որպես ժամանակակից քաղաքական կարգախոս: Երրորդ. հիշողությունը չի կարող վարչական որոշմամբ վերանալ: Պատմությունը ցույց է տալիս, որ նման հարցերում վարչական քայլերը հազվադեպ են կարողանում փոխել հասարակական հիշողությունը: Հայոց ցեղասպանության հիշողությունը ձեւավորվել է ավելի քան մեկ դար, իսկ Արցախի թեման վերջին տասնամյակների ընթացքում դարձել է ազգային ինքնագիտակցության կարեւոր մաս: Նույնիսկ եթե քաղաքական հռետորաբանությունը ժամանակավորապես փոխվի, դժվար է պատկերացնել, որ այդ թեմաները կկարողանան դուրս մղվել հասարակական հիշողությունից: Իշխանությունը փորձում է որոշ չափով փոխել պաշտոնական խոսույթը եւ նվազեցնել այն բառապաշարը, որը կարող է սրել արտաքին հարաբերությունները: Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ ազգային հիշողության հիմնական թեմաները չեն անհետանում վարչական որոշումներով: Դրանք շարունակում են ապրել գիտության, մշակույթի, Եկեղեցու եւ հասարակության մեջ՝ անկախ տվյալ ժամանակի քաղաքական հաշվարկներից:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՑԱՅԼԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՆԻ ԵՐԵԽԱ ՉԻ ՀԱՃԱԽՈՒՄ ԴՊՐՈՑ ԵՎ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ

Կրթական համակարգից դուրս մնացած երեխաների խնդիրը շարունակում է մնալ Հայաստանի ամենասուր սոցիալական մարտահրավերներից մեկը: ԿԳՄՍՆ զարգացման պետական ծրագրի շրջանակներում նախատեսված է, որ մինչեւ 2030թ. ոչ մի երեխա դուրս չնա պարտադիր կրթության համակարգից: 2025թ. փետրվարի 27-ի N12-Ա որոշմամբ հաստատված «Պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածությունը» ընթացիկ եզրակացության մեջ, ի թիվս բազմաթիվ այլ խնդիրների, Հաշվեքննիչ պալատը նշել է, որ 2024-ին հայտնաբերվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած 695 երեխա, որոնցից կրթության համակարգ է ընդգրկվել միայն 202-ը: Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը վկայում է, որ առնվազն 2025թ. դրությամբ ՀՀ կառավարությունը չի կատարում ոչ մի երեխայի պարտադիր կրթության համակարգից դուրս չթողնելու իր խոստումը:

Մենք գրավոր հարցում էինք ուղարկել ԿԳՄՍՆ, թե 2025-26 ուսումնական տարում քանի երեխա է դուրս մնացել կրթական համակարգից, եւ ինչ քայլեր է ձեռնարկում նախարարությունը՝ երեխաներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ:

«Պարտադիր կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են: Կարգով սահմանված շահագրգիռ եւ պատասխանատու մարմինների կողմից պարտադիր կրթությունից դուրս գտնվող երեխաների հետ իրականացված աշխատանքների շրջանակում առավել շատ հանդիպում են սոցիալական (տնտեսական) պատճառներով կրթությունն ընդհատելու դեպքեր, օրենքով սահմանված ժամկետում կրթության մեջ (առաջին դասարան) չներառվելու, հիմնական կրթությունից հետո ուսումնառությունը (ավագ դասարաններում ուսումնառությունը) անավարտ թողնելու դեպքեր եւ այլն: Պարտադիր կրթությունից դուրս գտնվող երեխաների կրթության իրավունքի վերականգնման ուղղությամբ իրականացվել են մի շարք առանցքային քայլեր, մասնավորապես՝ 2021թ. փետրվարի 11-ին ընդունվել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաեւ՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 154-Ն որոշումը, 2024 թ. մայիսի 1-ից «Պարտադիր կրթությունից դուրս մնացած եւ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգում պատասխանատու եւ շահագրգիռ մարմինների կողմից աշխատանքների մեկնարկը: Սահմանվել է պատասխանատու եւ շահագրգիռ մարմինների կողմից պարտադիր կրթությունից դուրս գտնվող երեխաների դեպքերը հաղորդելու մեխանիզմ, հստակեցվել են համապատասխան աշխատանքներում պատասխանատուների գործառույթները: ԽՀՄ ներկայացուցիչներին, կարգով սահմանված այլ պատասխանատու եւ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներին տրամադրվել են շարունակական խորհրդատվություն, համակարգում հասանելիության ապահովում: Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ներգրավելու ուղղությամբ տարվող միջոցառումների շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանում իրականացվել է փոփոխություն՝ սովորողին հանրակրթության մեջ ժամկետից ուշ ներգրավելու դեպքում համապատասխան տարիքային խմբի դասարան ընդունելու մասով»,- ասված է մեզ ուղարկված պատասխանում:

Կրթության եւ գիտության նախարարությունը, մեր հարցին ի պատասխան, մի հսկայական գրություն է ուղարկել, սակայն չի նշել ամենակարեւորը, թե քանի երեխա է դուրս մնացել պարտադիր կրթության համակարգից: Նույն հարցը գրավոր ուղարկել էինք ՏԿԵ նախարարություն, որտեղից մեզ պատասխանել են, որ մոտ 300 երեխա է դուրս մնացել հանրակրթությունից. «ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է մարզպետների աշխատակազմերի եւ ՏԻՄ-երի հետ՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին հայտնաբերելու եւ հանրակրթության մեջ ընդգրկելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ամսվա դրությամբ համայնքներից տեղեկատվություն է ստացվում՝ կրթական համակարգ վերադարձած երեխաների թվաքանակի վերաբերյալ, եւ սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը տրամադրվում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը: Կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը, ըստ մարզերի. Արագածոտն՝ 22, Արարատ՝ 31, Արմավիր՝ 23, Գեղարքունիք՝ 13, Կոտայք՝ 68, Լոռի՝ 38, Շիրակ՝ 20, Սյունիք՝ 17, Վայոց Ձոր՝ 3, Տավուշ՝ 12, Երեւան՝ 45: Կոտայքի մարզպետարանից մեզ հայտնեցին, որ կրթությունից դուրս մնացած 68 երեխաներից 24-ի կրթության իրավունքը վերականգնված է, 44-ինը գտնվում է վարման փուլում: Ըստ համայնքների՝ Աբովյանում կրթությունից դուրս է մնացել 13 երեխա, Հրազդանում՝ 13, Նաիրիում՝ 12, Չարենցավանում՝ 5, Գառնիում՝ 6, Արզնիում՝ 1, Բյուրեղավանում՝ 8, Նոր Հաճնում՝ 10»:

Մենք մասնավորապես հետաքրքրվեցինք, թե ինչ պատճառներով է Աբովյանում 13 երեխա դուրս մնացել կրթությունից: Համայնքապետարանի սոցիալական ծրագրերի, առողջապահության եւ տեղեկատվության բաժնից տեղեկացրին, որ պատճառները բազմազան են՝ սոցիալականից մինչեւ արտերկիր մեկնելու հանգամանքներ. «Աբովյանում 13 երեխաներից 2-ի՝ կրթությունից դուրս մնալու իրավունքն իրացվում է, որից 1 երեխա առողջական խնդիրներ ուներ, հոգեհուզական վիճակի հետ կապված, անգամ մահափորձ է ուզել անել: Աշխատել ենք թե՛ երեխայի, թե՛ ծնողի հետ: Մյուսը երկարատեւ բացակայությունների պատճառով մնացել է նույն դասարանում, դպրոց չի հաճախել: Մենք աշխատեցինք այդ երեխայի հետ: Երեխայի բնակության վայրը փոխվել էր Երեւան, փորձեցինք կազմակերպել ուսումը Երեւանում, մայրն ասաց, որ երեխան Աբովյանի դպրոցն է սիրում: Հասանք այն արդյունքին, որ, ճիշտ է, իրենից տարիքով փոքրերի հետ, այդուամենայնիվ, երեխան հաճախում է դպրոց: 1 երեխա էլ՝ 6-րդ դասարանից, դպրոց չի հաճախել ու ոչ էլ ուզում է հաճախել: Մենք այդ երեխայի հետ կապված՝ տարբերակ ենք դիտարկել, քննության կմասնակցի: 16-ամյա մեկ այլ երեխայի ընտանիքի հետ ակտիվ աշխատում ենք, որ երեխան պետք է դպրոց գնա, երեխայի մայրը ծանր հիվանդացել է, եւ այդ պրոցեսը ձգձգվեց: Հիմա փորձենք, որ այդ երեխան 9-րդ դասարանն ավարտի: Ունենք երեխա, որ, ֆուտբոլի պարապմունքները պատճառաբանելով, ուղղակի չի ուզում դպրոց գնալ, աշխատանքներ ենք տարել թե՛ ծնողների, թե՛ երեխայի հետ, սակայն՝ անօգուտ. ամեն անգամ խոստանում են, բայց երեխան դպրոց չի գնում: Երեխաներ էլ ունենք՝ 2 եղբայր, որ այժմ ապրում են Երեւան քաղաքում: Մայրն ասաց, որ երեխաները հագուստ, կոշիկ եւ գրենական պարագաներ չունեն, որ հաճախեն դպրոց. Աբովյանում ունենք աջակցության կենտրոն, առաջարկեցինք, որ գան կենտրոն եւ այդտեղից հագուստներ վերցնեն, եթե, իհարկե, այդ պատճառով երեխաները չեն հաճախում: Ունենք երեխաներ, որոնք արտերկիր են մեկնել»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՈՍԿՅԱ ՀԱՆԴԵՐՁՈՎ ԿԻՆԸ». ԻՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԴՐԱՄԱ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

«Ոսկյա հանդերձով կինը» պատմակենսագրական դրամա է, որը նկարահանել է ռեժիսոր Սայմոն Քյորթիսը, 2015 թվականին: Այն հիմնված է իրական փաստերի վրա եւ պատմում է ավստրո-ամերիկացի հրեա Մարիա Ալթմանի բազմամյա պայքարի մասին: Ալթմանը երկար տարիներ տարբեր դատական ատյաններում պայքարել է, որպեսզի հետ վերադարձնի արվեստի այն գործերը, որոնք Երկրորդ աշխարհամարտի ժամանակ խլել էին նացիստները: Կինոնկարի հիմնական թեման Գյուստավ Կլիմտի կտավներից մեկն է՝ նկարված 1907 թվականին, որը պատերազմից հետո ստացել է «Ոսկյա հանդերձով կինը» անվանումը: Ֆիլմում մի քանի պատմական գիծ կա՝ Հոլոքոստի հիշողություն, մշակութային արժեքների վերադարձի խնդիր, արդարության համար իրավաբանական պայքար եւ ազգային ու անհատական ինքնության ձեւավորման գործում արվեստի ունեցած դերակատարում: Գլխավոր հերոսը Մարիա Ալթմանն է՝ տարեց մի կին, որն ապրում է Լոս Անջելեսում: Քրոջ մահվանից հետո նա գտնում է 1940-ական թվականների վերջերին գրված նամակներ, որոնք վկայում են այն մասին, որ փորձ է արվել հետ վերադարձնել արվեստի այն գործերը, որոնք պատկանել են Բլոխ-Բաուեր ընտանիքին եւ գողացվել են նացիստների կողմից, 1930 թվականին: Այդ գործերի շարքում նաեւ նրա մորաքրոջ՝ Ադել Բլոխ-Բաուերի դիմանկարն է՝ նկարված Կլիմտի կողմից, որը դարձել է ավստրիական արվեստի սիմվոլներից մեկը: Դատական պայքար սկսելու համար նա վարձում է երիտասարդ փաստաբան Ռանդոլ Շոնբերգին: Նրանց համատեղ դատական պայքարը տեւում է մոտ 10 տարի եւ հասնում մինչեւ ԱՄՆ Գերագույն դատարանի իրավասություն: 2004 թվականին դատարանը որոշում է, որ օտարերկրյա պետությունը կարող է պատասխանատվության կոչվել ամերիկյան դատարանում՝ ինքնիշխան իմունիտետի մասին օրենքի շրջանակում: Դա համարվում է կարեւոր դատական նախադեպ եւ թույլ է տալիս շարունակել գործը: 2006 թվականին Ավստրիայի Արբիտրաժային դատարանը ճանաչում է Բլոխ-Բաուերների ընտանիքի ժառանգների իրավունքները Կլիմտի հինգ կտավների, ներառյալ նաեւ նշված դիմանկարի նկատմամբ: Ավելի ուշ այն վաճառվում է կոլեկցիոներ Ռոնալդ Լաուդերին եւ ցուցադրվում Նյու Յորքում: Ֆիլմը կառուցված է այնպես, որ հանդիսատեսը միանգամից երկու պատմական իրադարձություն է տեսնում էկրաններին. ընթացիկ զարգացումները՝ դատական պայքարի տեսքով, եւ Մարիա Ալթմանի հիշողությունները նախապատերազմական Վիեննայի մասին, տեղի հրեական մտավորականության հարուստ կյանքը 20-րդ դարի սկզբին եւ այդ աշխարհի կործանումը՝ նացիստական օկուպացիայի արդյունքում: Այն հետաքրքիր եւ դիտարժան ֆիլմ է, որը պարունակում է եւ պատմություն, եւ հոգեբանություն, եւ դրամատուրգիական ջանքեր:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՏԱՎՈՒՇ» ՁՕԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԴԱՏԻ ՎԵՐՋԸ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ

2021թ. նոյեմբերի 23-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Բերդ համայնքի Այգեձոր գյուղի բնակիչ, «Տավուշ» ՁՕԸ նախկին գործադիր տնօրեն, դրանից հետո «Էյ Ի Ջի սերվիս» ՍՊԸ-ի Տավուշի գազասպառման համակարգի Իջեւանի մասնաճյուղի տեղամասի պետ, 1960թ. ծնված Յուրի Որսկանյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2017թ. փետրվարի 9-ին «Տավուշ» ՁՕԸ վարչական խորհրդի նախագահի հետ կնքած թիվ 1 աշխատանքային պայմանագրի համաձայն նշանակված լինելով «Տավուշ» ՁՕԸ գործադիր տնօրենի պաշտոնում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, ունենալով ընկերության ֆինանսական միջոցները կառավարելու, ֆինանսական փաստաթղթերը ստորագրելու լիազորություն, 2017թ. ամռանը «Տավուշ» ՁՕԸ-ի կողմից Տավուշի մարզի Ոսկեվան բնակավայրում կառուցված 1032 մետր ընդհանուր երկարությամբ ոռոգման օժանդակ ջրագծի կապակցությամբ 2017թ. հոկտեմբերի 3-ին ներկայացրել է կատարողական ակտ, որի համաձայն՝ ջրագծի կառուցման համար հատկացվել է 6 միլիոն 592 հազար ՀՀ դրամ, կատարողական ակտում նշված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 460 հազար 586.47 դրամ, նշված ջրագծի կառուցման կատարողական ակտում, որպես իրականացված աշխատանքներ, ներկայացվել է կատարվածից ավելի ծավալով եւ վատնել է 664 հազար 799.65 դրամ՝ «Տավուշ» ՁՕԸ-ին պատճառելով խոշոր չափերի գույքային վնաս: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին (Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով) եւ 3-րդ կետերով (Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է խոշոր չափերով), 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (2 դրվագով) եւ 325 հոդվածի 1-ին մասով (Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաեւ՝ ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը): Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2024թ. ապրիլի 15-ին Բերդ քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մարդանյանը վճռել է ճանաչել եւ հռչակել Յուրի Որսկանյանի անմեղությունը 01.08.2003թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Հ. Միրզոյանի դրվագով) եւ քրօրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ, Յուրի Որսկանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Ս. Սարգսյանի դրվագով), Յուրի Որսկանյանին ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Յուրի Որսկանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, եւ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա սահմանահատումների վրա դրված արգելքը թողնել անփոփոխ՝ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Քաղաքացիական հայցը՝ Յուրի Որսկանյանից, հօգուտ «Տավուշ» ՁՕԸ-ի 1.059.283.65 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարել մասնակի՝ Յուրի Որսկանյանից, հօգուտ «Տավուշ» ՁՕԸ-ի, բռնագանձել 140 հազար ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի գումար: Յուրի Որսկանյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, որով խնդրել է մասամբ բեկանել կամ փոփոխել իր հանդեպ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024թ. ապրիլի 15-ին կայացրած դատավճիռը: 2024թ. հունիսի 25-ին Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Միհեր Արղամանյանը որոշել է սույն քրեական գործն ըստ առարկայական ընդդատության փոխանցել ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան: 2025թ. սեպտեմբերի 15-ին հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը որոշել է հանրային մեղադրող Վ. Գրիգորյանի միջնորդությունը՝ դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին, բավարարել, քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Հակակոռուպցիոն դատարանում սույն քրեական գործով դատական հաջորդ նիստը նշանակված է ապրիլի 14-ին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 18.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՆ ԷԼ ԵՆ ՀԱԿԱՍՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

«Մենք ակնկալում ենք, որ ժողովուրդը 2018թ. տված թավշյա մանդատը կփոխարինի պողպատե մանդատով, եւ մենք այդ պողպատե մանդատով ՀՀ-ում կհաստատենք իրավունքի եւ օրենքի դիկտատուրա»,- հայտարարել էր Նիկոլ Փաշինյանը 2021 թվականի հունիսի 13-ին՝ Աբովյանում, գլխավերեւում թափահարելով Հայաստանի դրոշի եռագույնով զարդարված «չագուճը»: Ինչպես ասում են՝ սատանան մանրուքների մեջ է: Միայն վերընտրվելուց հետո, վերլուծական ոչ խոր ունակություններ ունեցող շարքային քաղաքացիները, որ որոշել էին եւս մեկ շանս տալ «միամիտ Փաշինյանին», պետք է հասկանային, որ լավագույն թեկնածուին չեն ընտրել: Եվ հետո պիտի երեւար, թե, ի վերջո, ինչ իրավունքի կամ օրենքի դիկտատուրայով էր մեզ սպառնում Փաշինյանը, կամ՝ ում էր ծառայելու այդ իրավունքի եւ օրենքի դիկտատուրան՝ մեզ, թե՞, օրինակ, Ալիեւի ու Ադրբեջանի շահերին:

«Հրապարակը» գրել էր, որ ԿԳՄՍ նախարարը Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Էդիտա Գզոյանից պահանջել էր աշխատանքից ազատվելու դիմում ներկայացնել, իսկ մի երկու օր անց Փաշինյանը ճեպազրույցի ժամանակ հայտարարեց, որ ինքն է պահանջել Գզոյանի հեռացումը, քանի որ վերջինս իրենց քաղաքական գծի մեջ չի եղել: Նա համարձակվել է ադրբեջանցիների կողմից հայերի դեմ իրականացված ջարդերի ու ցեղասպանությունների մասին ամերիկյան լրատվամիջոցների անդրադարձերն ամփոփող գիրք նվիրել ԱՄՆ փոխնախագահ Վենսին՝ Ծիծեռնակաբերդ այցելության ժամանակ: «Երբ որ երկրի վարչապետն ասում է, որ ղարաբաղյան շարժում չկա, օտարերկրյա հյուրին արցախյան հիմնահարցի թեմայով գիրք նվիրելն ի՞նչ է նշանակում: Այս երկրում քանի՞ հոգի կարա արտաքին քաղաքականություն վարի: Այն պետական պաշտոնյան, որը Հայաստանի Հանրապետության կառավարության վարած արտաքին քաղաքականությանը հակասող բան կասի, պետք է ազատվի աշխատանքից, այդտեղ ի՞նչ թեմա կա: Այսինքն, մենք պետությո՞ւն ենք, թե՞ սա ինքնագործ խմբակ է»,- հարցնում է Փաշինյանը՝ բացատրելով իր որոշումը: Անհնար է չնկատել, որ Փաշինյանը կարծես պետությունը շփոթել է ինքնագործ խմբակի հետ եւ մոռացել թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավունքներով մարդկանց կարծիք արտահայտելու ու դրանք բարձրաձայնելու իրավունքի մասին:

Սա, թերեւս, այս իշխանությունների փոքրիկ բացթողումներից մեկը կարող էր լինել, եթե չփորձեին ճնշել այն ամենը, ինչ վերաբերում է հայ ազգային ինքնությանը: Վկան՝ երիտթուրքերը, Աթաթուրքն ու բոլշեւիկները. նրանց քաղաքականության մասին հիշողությունները դեռ թարմ են, եւ ստելը դժվար կլինի: Իր ղեկավարի միտքը շտապեց կրկնել նաեւ թուրքական ազգերի հանդեպ առանձնակի ջերմ զգացումներ տածող պատգամավոր Մարիա Կարապետյանը: Մեջբերեմ «Ֆակտորին» տված հարցազրույցում նրա արտահայտած միտքը, որը ժողովրդավարության բաստիոնի, եվրոպական արժեհամակարգի բացառիկ նմուշ է երեւի. «Ես թախանձագին խնդրում եմ պետության բոլոր աշխատողներին՝ նկատի ունենալ, որ իրենց ասած ցանկացած միտք, անկախ նրանից՝ դա գիտականության բերումով է, թե արժանապատվության բերումով է, թե ինչի բերումով, պետք է համապատասխանեցվի Հայաստանի արտաքին քաղաքականությանը»: Փորձենք թարգմանել այս տիկնոջ ասածը, ստացվում է, որ մենք, հանուն ՔՊ-ի ու Նիկոլ Փաշինյանի իշխանության շարունակականության, պետք է մեզ բարոյապես ոչնչացնենք, նվաստացնենք, մոռանանք մեր անցյալը, հրաժարվենք մեր մարդկային, սահմանադրական ու միջազգային բոլոր իրավունքներից եւ, ընդհանրապես, բոլոր իրավունքներից, որպեսզի այս իշխանությունը հանգիստ շարունակի իր «խաղաղության օրակարգը»՝ մեր ու մեր երեխաների կյանքի, արժանապատվության վրայով: Այստեղ անգամ հնարավոր է, որ ավելորդ է Հայաստանի հիշատակումը, որովհետեւ թե՛ Փաշինյանի, թե՛ Մարիա Կարապետյանի ու այս թեզը կրկնողների դեպքում խոսքի հիմքում ընկած է «Արեւմտյան Ադրբեջան» հորինովի, հակահայկական ու ցեղասպան քաղաքականությունը: Կզարմանամ, որ մի օր էլ պարզվի, որ մեր հայկական անուն-ազգանուններն էլ են հակասում այս իշխանությունների արտաքին քաղաքականությանը, ես չեմ զարմանա: Ցնորք է թվում. իզուր, այս իշխանություններն ամեն անգամ ծակում են հատակը՝ ավելի խոր փոսում հայտնվելով, մեզ էլ իրենց հետեւից քաշելով: Անակնկալները դեռ առջեւում են՝ Հայաստանի ու հայերի գլխին կախված Փաշինյանի պողպատե «չագուճը» վկա:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am